# Հ Ր Ա Մ Ա Ն   N 329-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ

**«12» ՀՈՒԼԻՍԻ 2018 Թ.** **ՔԱՂ. ԵՐԵՎԱՆ**

«ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՍՈՆՅԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԼԻԱԶՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ» ՆՈՏԱՐԱԿԱՆ ՏԱՐԱԾՔԻ ՆՈՏԱՐ ՕԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆԻՆ ՎԵՐԱՊԱՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասով և 22-րդ հոդվածի 4-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության նոտարական պալատի նախագահ Վ. Հովսեփյանի 2018 թվականի հուլիսի 6-ի N ԵՆՊ-415/18 գրությունը և «Վայոց Ձորի մարզ» նոտարական տարածքի նոտար Ս. Պողոսյանի դիմումը.

Հ Ր Ա Մ Ա Յ Ո Ւ Մ   Ե Մ՝

1. 2018 թվականի հուլիսի 16-27-ը ներառյալ «Վայոց Ձորի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Եղեգնաձոր նոտար Սոնյա Պողոսյանի ժամանակավոր բացակայության ընթացքում նրա կողմից «Նոտարիատի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 58-63-րդ հոդվածներով նախատեսված նոտարական գործողություններ կատարելու, ինչպես նաև վավերացված գործարքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու կամ դրանք վաղակետ լուծելու լիազորությունները վերապահել «Վայոց Ձորի մարզ» նոտարական տարածքի, նստավայր՝ քաղաք Վայք նոտար Օլյա Գասպարյանին:

Ժամանակավոր պաշտոնակատար՝

**ԱՐԹՈՒՐ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ**